ՀՀ ԳԱԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017-2019 թթ.

ԳԿՄԿ Ուսումնական մաս

1) ***<u>Մշակել կրթական ծրագրերի և այլ գործընթացների բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգեր՝լիարժեք օգտագործելու միջազգային առաջատար փորձը Կենտրոնի ծրագրերը համադրելի դարձնելու արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման ծրագրերի հետ,</u>***

<u>Համաձայն Բարելավման պլանի՝</u> մասնագիտական ամբիոններում ձևավորվել են ՄԿԾ-երի բենչմարքինգի իրականացման խմբեր /հր. N 84-Կ, 01 ապրիլի, 2017 թ./: 2018 թվականին Բնապահպանություն և բնօգտագործում, Տնտեսագիտություն և կառավարում, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ամբիոններում մագիստրոսական կրթական ծրագրերը ենթարկվել են բենչմարքինգի, որը շարունակական գործընթաց է և Կենտրոնի ուսումնական մասը հատուկ ուշադրություն է դարձնում հետագա աշխատանքների բարելավմանը:

2) ***<u>Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծության, ինչպես նաև բենչմարքինգի արդյունքների հիման վրա հստակեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքները և ապահովել դասավանդվող առարկաների վերջն-արդյունքների և բովանդակային կապը դրանց հետ,</u>***

Շարունակաբար ուսումնասիրվում են ներքին /ուսանողներ, դասախոսներ/ և արտաքին/շրջանավարտներ, գործատուներ/ շահակիցների կարծիքնե-րը, որոնց վերլուծությունները Կենտրոնի ՈԱ բաժնի կողմից տրամադրվում է Կենտրոնի բոլոր մասնագիտական ամբիոններին և կառուցվածքային

ստորաբաժանումներին: Դրանից բացի 2018 թվականին մշակվել է շահակիցների կարիքների վերլուծության և գնահատման նոր ընթացակարգ/ՀՀ ԳԿՄԿ-ի <<Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման>>/, որը 10.10.2018 թվին հաստատվել է Կենտրոնի ԳԽ-ի կողմից՝ թիվ 131 նիստում:

Համաձայն Կենտրոնի մասնագիտական ամբիոններում ձևավորված ՄԿԾ-ների՝ բենչմարքինգային խմբերի կատարած ուսումնասիրությունների վերանայվել են <<Արևելագիտություն>>՝ /Բոլոնիայի համալսարանի համանուն ՄԿԾ-ի համեմատությամբ/, <<Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա>>՝ /Թուլուզի համալսարանի/, <<Բնապահպանություն և բնօգտագործում>>՝ /Իտալիայի Տուշայի համալսարան/: Իսկ նույն՝ Տուշայի համալսարանի <<տնտեսագիտություն, ճարտարագիտություն, հասարակություն և բիզնես>> -ի դեպարտամենտների հետ համատեղ մշակվել է նոր՝ <<Ֆինանսների կառավարում>> մագիստրոսական կրթական ծրագիրը:

Մյուս ամբիոններում ՄԿԾ-ների բենչմարքինգը պլանավորման փուլում է:

Դասավանդվող առարկաների վերջնարդյունքների և ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցումը և բովանդակային թարմացումը նախատեսվում է իրականացնել 2019-2020թթ. ուստարվանից սկսած:

3) ***Զարգացնել գործող միջառարկայական մագիստրոսական ծրագրերը և խթանել նորերի ստեղծումը, հիմնադրել արտադրության հետ անմիջական կապ ունեցող և այլ հետազոտական կամ ուսումնական հաստատությունների հետ իրականացվող ծրագրեր,***

Գործող միջառարկայական մագիստրոսական ծրագրերի վերաբերյալ տեղի է ունեցել քննարկում՝ 2019 թ. մարտի 15-17-ին Ծաղկաձորում կազմակերպված <<Միջամբիոնային կապերի սերտացում և որակի շարունակական բարելավում>> թեմայի շրջանակում: Մշակվել է համատեղ մագիստրոսական ծրագրեր Տուշայի համալսարանի հետ <<Ֆինանսական կառավարում>> և <<Շուկայագիտություն>>համատեղ մագիստրոսական ծրագրերով, /Տուշայի համալսարանում << Շուկայագիտություն>>-ը համապատասխանում է <<Մարկետինգ և որակ>> ծրագրին/:

4) ***Հստակեցնել ՄԿԾ-ների բովանդակային և կառուցվածքային նորացման գործընթացում աշխատաշուկայի, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և վերլուծության մեխանիզմները,***

ՄԿԾ-ների բովանդակային և կառուցվածքային նորացման գործընթացի համար կարևոր է ներքին և արտաքին շահակիցների գնահատումը, որի

ուղղությամբ Կենտրոնը իրականացնում է հարցումներ /ուսանողական հարցում,Կենտրոնի շրջանավարտների կողմից կրթական ծրագրի հարցում-գնահատում, Գործատուների կողմից կրթական ծրագրի շրջանավարտներից գոհունակության գնահատում, պրակտիկայի գնահատում /գիտամանկավարժական, գիտահետազոտական/

5) ***<u>Գնահատման համակարգում և դասընթացների մասնագրերում հստակեցնել վերջնարդյունքների և թեզերի գնահատման չափանիշները, ներառելով դասավանդման և ուսումնառության բոլոր ձևերի արդյունքների գնահատումները /գործնական և լաբորատոր աշխատանքներ, պրակտիկա, մասնակցություն սեմինարներին, անհատական և խմբային աշխատանքներ և այլն/</u>***

Գնահատման համակարգի բարելավումը Կենտրոնի տնօրինության ուշադրության կենտրոնում է: Նախատեսվում է 2019-20 ուստարվա ավարտին ներդնել մագիստրոսական թեզերի գնահատման նոր չափանիշներ, որոնք այս պահին մշակվում են ուսմասի պետի գլխավորությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

<u>6/ Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգով նախատեսված բոլոր գործողությունները, մշակել ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության գնահատման և որակի ապահովման ցուցիչներ,</u>

Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ՝ ըստ ամբիոնների /ըստ ՄԿԾ-ների/ ձևավորվում են մոնիթորինգի խմբեր: Նախատեսվում է մոնիթորինգային խմբերի վերապատրաստումները սկսել 2019 թ. հոկտեմբերից:

ԳԿՄԿ ուսումնական մասի պետ՝ Ե. Զարգարյան